ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/17» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

28.03"2022թ.
ժամը 16:40

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ (գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ))՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,

գնահատողներ՝

- ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայության մթերքի պլանավորման և ապահովման բաժնի պետ, գնդապետ Վ. Ասատրյան,
- ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայության զորային սննդի կազմակերպման և պահեստների ու տեխնիկական միջոցների բաժնի պետ, փոխգնդապետ Հ" Սահակյան:
- ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության թիկունքային ապահովման վարչության ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մինասյան

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Միքայելյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/17» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Միքայելյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/17 ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/17» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ. Միքայելյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **ապրանքի** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/17» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը:

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Տեխսթոր» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/17» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Լ. Միքայելյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն թերի են, բացակայում է հայտի ապահովումը (հավելված N 3):

2"3 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» **կարգի 41-րդ կետը՝ 28.03"2022թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցել վերոնշյալ մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

2.4 30.03.2022թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, արձանագրելով որ սույն արձանագրության 2.3 կետում նշված՝ շտկման ենթակա անհամապատասխանությունը մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է, որոշեց մասնակիցի հայտը գնահատել բավարար (համապատասխան) սույն ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ. Միքայելյան)

3.1 Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Գնման առարկայի						Ընտրված մասնակցի				Մասնակիցների		
չ/հ	անվանում	չ/մ	քանակ	միավորի գին	Նախահաշ-վային գումար	Անվանում	գինը			անվանում	գինը	
							առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր		առանց ԱԱՀ	ընդհանուր
1	Կցորդ-ցիստեռններ /Ջրի կցորդ ՑԿ-1,2/	հատ	10	2796000	27960000	բանակցություն				«Տեխսթոր» ՍՊԸ	33000000	33000000

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են հրավերի պայմաններին (ճիշտ են):

3"3 Քանի, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/17» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով մեկ մասնակից է գնային առաջարկ ներկայացրել, որի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է գնման առարկայի նախահաշվային գինը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը գնահատող հանձնաժողովը որոշեց 30"03.2022թ. կայացած նիստը կասեցնել և մասնակցին ծանուցել, որ գնի

նվազեցման նպատակով 04.04.2022թ. ժամը 16:00-ին ՀՀ ՊՆ ԳԿՎ նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպվելու են բանակցություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/17» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Լ. Միքայելյան)

4"1 Գնահատող հանձնաժողովի 04.04.2022թ. կազմակերպած բանակցություններին մասնակիցը չի ներկայացել և գնային առաջարկը մնաց անփոփոխ:

Գնման առարկայի						Ընտրված մասնակցի				Մասնակիցների		
չ/հ	անվանում	չ/մ	քանակ	միավորի գին	Նախահաշ-վային գումար	Անվանում	գինը			անվանում	գինը	
							առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր		առանց ԱԱՀ	ընդհանուր
1	Կցորդ-ցիստեռններ /Ջրի կցորդ ՑՎ-1,2/	հատ	10	2796000	27960000					«Տեխսթոր» ՍՊԸ	33000000	33000000

4.2 04"04.2022թ. հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/17» ծածկագրով ԳՀ ընթացակարգը հայտարարվել է չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Լ. Միքայելյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-7/17» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Լ. Միքայելյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահող (ԳԱՊ)՝ Հ. Մելիքյան

Գնահատողներ՝ Վ. Ասատրյան

Հ. Սահակյան

Ա. Մինասյան

Գնումները համակարգող՝ Լ. Միքայելյան